ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՎԱՐՊԵՏ ՄՈՄԻԿԻ ԿԵՐՊԱՐԸ ԸՍՏ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ

ԼՈՒՍԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ
Կերպարվեստի ուսուցչուհի
Երևանի Խ. Աբովյանի անվան
թիվ 2 հիմնական դպրոց

Ամփոփագիր

Հայ արվեստի ամենանշանավոր գործիչներից է միջնադարյան բազմաշնորհ արվեստագետ՝ ճարտարապետ, քանդակագործ, գրիչ և մանրանկարիչ Մոմիկը: Նրա կերտած եկեղեցիները, մեծարվեստ քանդակներն ու խաչքարերը, ընդօրինակած ձեռագրերի մանրանկարները համարվում են հայ միջնադարյան արվեստի բացառիկ ստեղծագործություններ: Ընդհանրապես, Մոմիկի ստեղծագործական ժառանգությունը ներկայացնում է հայ արվեստի ավանդական սկզբունքների և նորարարական մոտեցումների զուգորդմամբ ու զարգացմամբ ստեղծված գեղարվեստական մի նոր որակ: Մեր օրեր են հասել վարդպետ Մոմիկի մի շարք ստեղծագործություններ, հիշատակարաններ և վիմագիր արձանագրություններ:

Հոդվածում փորձ է արվել ներկայացնել մեծ արվեստագետի ստեղծագործ կերպարը և հարուստ ժառանգությունը՝ հիմք ընդունելով տարբեր հեղինակների ու աղբյուրների թողած վկայությունները:

Բանալի բառեր. *Մոմիկ, ճարտարապետ, ճարտարապետություն մանրանկարիչ, մանրանկարչություն, Ստեփանոս Օրբելյան, Նորավանք, Օրբելի իշխան*:

Հայ արվեստի ամենանշանավոր գործիչներից է միջնադարյան բազմաշնորհ արվեստագետ՝ ճարտարապետ, քանդակագործ, գրիչ և

մանրանկարիչ Մոմիկը: Նրա կերտած եկեղեցիները, մեծարվեստ քանդակներն ու խաչքարերը, ընդօրինակած ձեռագրերի մանրանկարներն իրավամբ համարվում են հայ միջնադարյան արվեստի բացառիկ ստեղծագործություններ: Միջնադարյան հայ մշակույթին փոքր-ինչ ծանոթ մարդն անմիջապես կտարբերի Մոմիկի մանրանկարներն այդ շրջանում ստեղծագործած մյուս բոլոր վարպետների աշխատանքներից: Դրանք աչքի են ընկնում խորությամբ, ընդունվածից տարբեր, անսովոր լուծումներով, համարձակ հորինվածքներով, միաժամանակ՝ նրբարվեստ ճարտարապետական կառույցներով, կենդանի, կյանքից վերցված կերպարներով: Իր որոշ աշխատանքների տակ նա դրել է «Մոմիկ վարդպետ» ստորագրությունը, որով էլ հայտնի է եղել և հասել է մինչև մեզ:

Մոմիկը ստեղծագործել է Վայոց ձորում 13-րդ դարի վերջին և 14-րդ դարի սկզբին՝ Օրբելյան և Պռոշյան իշխանների տիրապետության օրոք: Առաջին անգամ վարդպետ Մոմիկի անվանը հանդիպում ենք 1283-1284 թթ. Գլաձորի համալսարանում գրված ձեռագրի հիշատակարանում (Վիեննա. Ձեռ. թիվ 571, թերթ 24ա): Հիշատակագրությունը զետեղված է բուսական ոլորազարդերով կազմված գլխազարդի ներսի՝ անսպասելի մի հատվածում. «զՄոմիկ նկարիչ խորանիս յիշեցեք, աղաչեմ»: Հետաքրքրական է, որ առաջին՝ «Զ» տառի բոլորակի մեջ Մոմիկը մարդկային դեմքի փոքրիկ գծանկար է արել, իսկ գրության վերջում՝ ստորագրություն հիշեցնող գծագրություն[1]:

Մոմիկ վարդպետի անունը բազմիցս հիշատակվում է Նորավանքում (նկ.1), որն Օրբելյան իշխանական տան հոգևոր կենտրոնն էր և Սյունյաց մետրոպոլիտների աթոռանիստը: Վերջին տարիներին հայտնի դարձած տվյալների համաձայն՝ Մոմիկը ծնունդով էլ Վայոց ձորից էր[2]: Նա մի քանի տասնամյակ եղել է Օրբելյանների տան ճարտարապետ-նկարիչը, որով էլ մեծապես պայմանավորված է նրա ընդարձակ գործունեությունն ու հռչակը: Այսպես, իշխան Տարսայիճ Օրբելյանի որդի, Սյունիքի ապագա մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանն ուսանել է Գլաձորի համալսարանում և Ներսես Մշեցուց վարդապետական գավա-

---

[1] **Ավետիսյան Ա.Ն.**, *Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը*, Երեւան, 1971:

[2] Մոմիկ՝ Ուլգյուր-Հայկական ժառանգությունը:

զան ստացել[1]: Մոմիկը վերոնշյալ ձեռագիրն ընդօրինակել է Գլաձորում՝ Ներսես Մշեցու համար: Դատելով այս փաստից՝ կարող ենք ենթադրել, որ նա Ստեփանոս Օրբելյանի կրտսեր ուսումնակիցն է եղել, և որ այստեղից է սկսվել նրանց համագործակցությունը: Ապա Ստեփանոս Օրբելյանից այն փոխանցվել է նրա հաջորդ և տոհմակից մետրոպոլիտներին՝ Հովհաննես Օրբելուն և Ստեփանոս Տարսայիճին: Նրանց և Օրբելյան տոհմի մյուս իշխանների ու իշխանուհիների պատվերով էլ Մոմիկն ընդօրինակել է ձեռագրեր, կառուցել եկեղեցիներ, կերտել խաչքարեր:

Մոմիկի՝ վաղ շրջանում արված մեկ այլ ձեռագրի մասին հիշատակություն է պահպանվել 1287 թ. Թեղենյաց վանքում գրված Ավետարանի հիշատակարանում, որտեղ Դավիթ գրիչը նշում է նրա սկսած շքեղ մատյանի գերեվարվելու մասին: 1302 թվականին Մոմիկը Ստեփանոս Օրբելյանի պատվերով նկարազարդում է անսովոր փոքր չափերով մի Ավետարան (նկ. 2): Ըստ երևույթին, այն նախատեսված է եղել հագուստի գրպանում պահելու համար[2]: Ձեռագրի թերթերի ընդհանուր չափերն են 12x8,5 սմ, որոնց մեջ՝ ավելի փոքր դաշտում Մոմիկը զարմանալի վարպետությամբ պատկերել է Ավետարանի տերունական պատկերաշարի հիմնական տեսարանները: Վերջինները, թվով 12, զետեղված են ձեռագրի սկզբի թերթերում՝ Ավետումից մինչև Հոգեգալուստ՝ եկեղեցական տոների կանոնական հաջորդականությամբ: Այս պատկերները ներկայացնում են ինչպես ավանդական, այնպես էլ նորարարական պատկերագրական տարրեր ունեցող ուշագրավ հորինվածքներ:

Ստեփանոս Օրբելյանի պատվերով և հովանավորությամբ է իրագործվել նաև Մոմիկի առաջին ճարտարապետական կառույցը՝ Տաթևի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որի արձանագրության մեջ, սակայն, ճարտարապետի անունը չի նշված[3]: Մոմիկի կառույցներից միայն մեկն է կրում հեղինակի անունը՝ «Մոմիկ վարդպետ»: Այն պահպանված է Արենիի եկեղեցու՝ 1321 թ. արձանագրության մեջ[4] և

---

[1] **Մաթևոսյան Կ.**, *Մոմիկ*, Երեւան, 2010, էջ 10:
[2] Անդ, էջ 22:
[3] **Մնացականյան Ստ.**, *Վարպետաց վարպետներ. Մանուել, Տրդատ, Մոմիկ*, Երևան, 1982, էջ 152:
[4] **Մաթևոսյան Կ.**, *«Մոմիկ»*, էջ 30:

գտնվում է գլխավոր մուտքի ճակատը զարդարող պատկերաքանդակի մոտ:

Վարդպետ նշանակում է ուսուցիչ: Վարդապետության աստիճան տրվում է ոչ թե ձեռնադրությամբ, այլ տվչությամբ՝ եպիսկոպոսի կամ կաթողիկոսի կողմից: Վարդպետը կարող է գավազանը ձեռքին քարոզել եկեղեցու բեմից: Վարդապետական աստիճան ստանալու համար աբեղան ներկայացնում է վարդապետական թեզ, որը Եկեղեցու գիտական աստիճան է: Վարդպետը եկեղեցում Ավետարանի քարոզիչն է, ուսուցանողը, քրիստոսավանդ հավատքը պաշտպանողը, ուսումնասիրություններ պատրաստողը:

1303 թ. մահանում է Ստեփանոս Օրբելյանը, որին հաջորդում է հորեղբոր թոռը՝ Հովհաննես Օրբելը (1300-1324): Նա նույնպես ուսանել էր Գլաձորի համալսարանում և դեռևս Ստեփանոս Օրբելյանի կենդանության ժամանակ ճանաչվել որպես Սյունյաց հաջորդ մետրոպոլիտ[1]: Հովհաննես Օրբելու առաջին գործը լինում է Ստեփանոս Օրբելյանի հիշատակին շքեղ խաչքար պատվիրելը, որը նա հանձնարարում է Մոմիկին: Նրբահյուս հարդարանքով խաչքարի վերնամասում պատկերված է Քրիստոսը՝ գահին բազմած, իսկ ստորին մասում 1304 թվականի ընծայական արձանագրությունն է, որի վերջում հիշատակվում է՝ «Մոմիկ վարդպետ»:

1308 թ. Տարսայիճի որդի Էլիկում Օրբելյան իշխանի կնոջ՝ Թամթա խաթունի պատվերով Մոմիկը Նորավանքում մի հոյակապ խաչքար է (նկ.3) կերտում: Խաչքարի վերնամասում Բարեխոսության հորինվածքն է: Կենտրոնական կամարի տակ՝ Քրիստոսի աջ և ձախ կողմերի խորշերում Աստվածածնի և Հովհաննես Մկրտչի բարձրաքանդակներն են: Խաչքարի արձանագրությունն ավարտվում է «Մոմիկ վարդպետ հիշեցէք» բառերով:

Մոմիկի երրորդ խաչքարի պատվիրատուն դարձյալ Թամթա իշխանուհին էր: Այստեղ խաչի աջ և ձախ կողմերում առանձին շրջանակների մեջ Մոմիկը քանդակել է տասներկու առաքյալների կիսանդրիները, որոնցից երկուսի մոտ գրել է նրանց անունները՝ «Պետրոս»,

---

[1] **Աբրահամ եպս. Մկրտչյան**, «Սյունյաց աթոռը և Նորավանքը Օրբելյանների օրոք», *Նորավանք* 2009, Երևան, 2009, էջ 4-12:

«Անդրէաս»: Բուրթելաշեն Ս. Աստվածածին եկեղեցու վրա պահպանվել է նրա կառուցման թվականը՝ 1339, իսկ Մոմիկի հիշատակի համար Նորավանքի կանգնեցված խաչքարի (նկ.4) արձանագրության մեջ գրված է արվեստագետի մահվան թվականը՝ 1333 թ. «Յիշեա Քրիստոս Աստուած Զմոմկա հոգին և ողորմեա: Թվ ՉՁԲ»: Այս փաստից ելնելով՝ տարբեր ուսումնասիրողներ Բուրթելաշենի ճարտարապետի մասին տարբեր տեսակետներ են առաջ քաշել: Առավել ընդունված տեսակետի համաձայն[1], որին հարում ենք նաև մենք, իրականությանն ամենից մոտ է թվում այն ենթադրությունը, որ եկեղեցու շինարարությունն սկսվել է Մոմիկի նախագծով, իսկ նրա մահվանից հետո կառուցման աշխատանքները շարունակել են աշակերտները: Ավելացնենք, որ Բուրթելաշենի հյուսիս-արևմտյան անկյան մոտ՝ կառույցին կից պատրաստված պատվանդանի վրա կանգնած էր մի խաչքար, որ Բուրթելը ձոնել էր իր՝ 1318 թ. սպանված եղբոր՝ Բուղտայի հիշատակին: Մեր կարծիքով՝ սա կարող է նշանակել, որ Բուրթելաշենի կառուցումն սկսվել է արդեն այն ժամանակ՝ մոտավորապես 1319-1320 թվականներին: Հայտնի է, որ Մոմիկն Արենիի եկեղեցին ավարտել է 1321-ին, իսկ 1333-ին նրա մահը կարող էր Բուրթելաշենի շինարարությունը մի քանի տարով դանդաղեցնելու պատճառ դառնալ: Այս հանգամանքները ևս հաշվի առնելով՝ կարող ենք ավելի համոզված ասել, որ Բուրթելաշեն Ս. Աստվածածին եկեղեցու (նկ.5) շինարարությունն սկսվել է Մոմիկի կենդանության օրոք:

Ինչ վերաբերում է Մոմիկի աշակերտներին, ապա չնայած համապատասխան պատմական վկայությունների բացակայությանը, կարելի է չկասկածել, որ այդպիսիք եղել են: Հարկ է նշել, որ Նորավանքն ընդհանրապես քանդակագործական ավանդույթների կենտրոն է եղել: Այստեղ շնորհալի արվեստագետներ են աշխատել նաև Մոմիկից առաջ և հետո, իսկ նրա ժամանակ ապրածները ենթադրաբար կրել են մեծ վարպետի ազդեցությունը և սովորել նրանից: Հնարավոր է, որ կան նաև Մոմիկի գծագրերով, բայց այլ վարպետի կողմից պատրաստված խաչքարեր: Դրանցից մեկը կարելի է համարել վերը նշված՝ Բուրթել իշխանի եղբոր հիշատակին պատվիրված խաչքարը: Մեկ այլ մոմիկյան նորարարական շնչով և չափազանց ուշագրավ պատկերագրությամբ

[1]**Ղանալանյան Ա.**, *Ավանդապատում*, Երևան, 1969, էջ 228:

խաչքար, որը թվագրված է 1332, դրված է Նորավանքի գավթում:

Համառոտակի անդրադառնանք նաև Մոմիկի ընտանիքին վերաբերող որոշ տվյալների: Դրանց մի մասն ի հայտ են եկել բոլորովին վերջերս: Դեռևս 1955 թ. Ռինդ գյուղի մերձակայքի Վերին Ուլգյուր գյուղատեղի ավերակ եկեղեցու (նկ.6) գերեզմանատանը Ս. Բարխուդարյանը հայտնաբերել էր խաչքարի վրա գրված մի արձանագրություն, ուր հիշատակվում են Մոմիկի որդին՝ Ասկանդարը, և վերջինիս որդին՝ Շատոնիկը[1]: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մոմիկի որդին արձանագրության մեջ նշում է, թե իր հայրենի հողի մի մասը նվիրատվություն է անում, Բարխուդարյանը ենթադրել է, որ այդ գյուղը Մոմիկի ծննդավայրն է եղել: 2004 թ. հիշյալ բնակավայրի արևելյան մասում գտնվող Ներքին Ուլգյուր գյուղատեղիի (Աղավնաձոր գյուղից մոտ 5 կմ հյուսիս-արևմուտք) Սբ. Աստվածածին եկեղեցու մոտ հայտնաբերվել են Մոմիկի ազգականներին պատկանող տապանաքարեր[2]: Դրանց մեջ շատ արժեքավոր է Մոմիկի ծնողների տապանաքարը՝ «ԶՀԱՅՐ ԵԻ ԶՄԱՅՐ ՄՈՄԻԿԱ ԶԳՐ(Ի) ԳՈՐ ԵԻ ԶԱՎԹԱՅՆ ՅԻՇԵՑԷՔ: ԹՎ: ՉԽԷ (1298)» արձանագրությամբ: Սրանով հաստատվում է, որ Մոմիկը Վերին կամ Ներքի Ուլգյուրի (Ժամիդուզ), ծնունդ է:

Հետաքրքիր է, որ Գրիգորն ու Ավթան իրենց մահկանացուն կնքել են նույն՝ 1298 թվականին: Իսկ այն փաստը, որ նրանց տապանաքարին նշված է, թե Մոմիկի ծնողներն են, վկայում է, որ վերջինս արդեն այդ ժամանակ մեծ ճանաչում վայելող վարպետ էր:

Մեկ այլ տապանաքարի արձանագրության մեջ հիշատակվում են Մոմիկի եղբայր Գոհարատաշը և իր դուստր Խլաթը, որոնք մահացել են 1333 թվականին: Այս տապանաքարին կից հայտնաբերվել է մեկ ուրիշը, որը պատկանում էր Մոմիկի՝ նույն եղբոր որդուն: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ երկու տապանաքարերը կից են և տապանաքարի վրա գրված է «Ի ՄԻՈՒՄ ԱԻՈՒՐ ԵԻ ԹՎԻ», արձանագրության հրատարակիչներն իրավացիորեն ենթադրել են, որ Խազին կամ Խազեն իր հոր և քրոջ հետ մահացել է նույն ժամանակ (նույն տարվա

---

[1] **Բարխուդարյան Ս.**, *Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ*, Երևան,1963, էջ 85-86:

[2] **Քալանթարյան Ա., Սարգսյան Գ., Մելքոնյան Հ.**, «Մոմիկյան նորահայտ հիշատակներ», *Հայ արվեստ*, 2005, թիվ 3, էջ 28-30:

նույն օրը, այսինքն՝ 1333 թվականին): Տապանաքարերից մեկի վրա էլ պահպանվել է Գոհարատաշի տիկնոջ՝ Խերիկի անունը, բայց մահվան թվականն անընթեռնելի է: Նրա եղբոր ու վերջինիս երկու զավակների տապանաքարերի տվյալները բերում են այն եզրակացությանը, որ 1333 թվականին այս ընտանիքի հետ մի ճակատագրական դժբախտություն է պատահել. հնարավոր է՝ զոհ են գնացել համաճարակի կամ թշնամական հարձակման:

Վերին և Ներքին Ուլգյուր բնակավայրերի արձանագրությունները հայտնաբերողներին հնարավորություն են տվել կազմել Մոմիկի տոհմածառը: Հայ միջնադարյան ճարտարապետներից միայն Նորավանքի մեկ այլ երախտավորի՝ Սիրանեսի տոհմի մասին է հայտնի մի քանի տվյալ[1], մյուս մեծերի՝ Անիի ճարտարապետ Տրդատի կամ Աղթամարի ճարտարապետ Մանվելի՝ միայն անուններն են պահպանվել:

Ժամանակին Մոմիկի վայելած մեծ համբավի մասին է վկայում նրա անվան հետ կապված ավանդազրույցը: Ժողովրդական բանահյուսության՝ հատուկ ոճով կառուցված այդ գողտրիկ պատումը, ուր խոսվում է շնորհալի ճարտարապետի՝ Սյունյաց իշխանի աղջկան սիրահարվելու, իշխանի՝ գեղեցիկ վանք շինելու դեպքում աղջկան վարպետին կնության տալու խոստման և պայմանը կատարելուց՝ վանքը շինելուց հետո խոստումնազանց իշխանի հրամանով Մոմիկին գմբեթից հրելու-գցելու մասին, իհարկե, հեռու է իրական լինելուց: Այդուհանդերձ, հավանաբար, այն ունի վավերականության ենթաշերտ, որը կապված է, մասնավորապես, Մոմիկի՝ սկսած կառույցն անավարտ թողած կյանքից հեռանալու հանգամանքի հետ, եթե ընդունենք Բուրթելաշեն եկեղեցու առումով մեր՝ վերը բերված ճշգրտումը:

Ընդհանուր առմամբ, աննշան բացառություններով, միջնադարյան հիշատակարաններն իրենց կաղապարային ձևակերպումներով հնարավորություն չեն ընձեռում պատկերացում կազմել գրիչների ու մանրանկարիչների անձնական զգացմունքների և անհատականության մասին: Այնուամենայնիվ առավել տաղանդավոր արվեստագետները կարողացել են թեկուզ մի քանի բնորոշ բառերով որոշակի տպավորություն ստեղծել: Այդ իմաստով Մոմիկի հիշատակարանները միայն միջ-

[1] **Բարխուդարյան**, *Միջնադարյան հայ ճարտարապետներ*, էջ 62-75:

նադարյան մարդու՝ «մեղավորության» արտահայտիչը չեն: Դրանք պարուրված են մի անբացատրելի լուսավոր թախիծով: 1292 թվականի հիշատակարանում Մոմիկը գրչական կարծեցյալ սխալների համար ընթերցողի ներողամտությունն է հայցում և այնուհետև յուրովի բացատրում դրա պատճառը. «Զի բեկ սրտիւ և թախանձեալ մարմնով գրեցաւ»[1]: Իսկ 1302 թ. հիշատակարանում նույն հանգամանքը մեկնաբանում է հետևյալ խոսքերով. «Զի... թէպէտ անհմուտ էի, այլ ժամանակս ձմեռն էր և տունս նսեմ»[2]:

Մոմիկի՝ որպես արվեստագետի արժանիքը ոչ միայն նրա բնածին տաղանդի մեջ է, այլև մտքի թռիչքի և վառ դրսևորված անհատականության: Նրա գործերում հաճախ անփույթ ձևն իր մեջ ամփոփում է ներթաքույց միտք: Նրա ստեղծած պատկերներից շատերը ավետարանական իրադարձությունների բարդ մեկնաբանություններ են, որոնց պատկերագրական արմատները դավանաբանական պաշտամունքային հիմքեր ունեն: Կարելի է ասել, որ Մոմիկը հայ արվեստի պատմության մեջ այն բացառիկ գործիչներից է, որը, կապերը հիմնավորապես չխզելով հանդերձ միջնադարյան մտածողության հետ, որպես ճարտարապետ և նկարիչ՝ զգացել ու սերունդներին է փոխանցել նոր ժամանակների թարմ շունչը: Այսպես, օրինակ, նա հրաժարվել է ավետարանական կերպարներին հարթանկարային, անշարժ, ծիսական կեցվածքով և անհաղորդ դեմքով պատկերելու սկզբունքից՝ փորձելով նրանց ներկայացնել որպես ճկուն շարժուձևով և հարուստ ներաշխարհով օժտված էակների (նկ. 7, գուն. պտկ. 5): Այս միտումը 13-րդ դարի երկրորդ կեսին արդեն առկա էր կիլիկյան մանրանկարչության մեջ: Ամենևին բացառված չէ, որ Մոմիկը ծանոթ էր կիլիկյան օրինակներին, որոնք նրա համար ոգեշնչման աղբյուր են ծառայել:

Միշտ էլ լինում են շրջադարձային պահեր, որոնք գործող արվեստագետների ինքնության ու տաղանդի շնորհիվ հանգեցնում են հետագա զարգացումների: Այդպիսի արվեստագետ էր Գլաձորի դպրոցի ներկայացուցիչ Մոմիկը. նրա խորանիստ միտքն ու անդավաճան նրբազգացությունը մղում էին գեղագիտական նորարարությունների:

---

[1] *ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, էջ 679:

[2] **Խաչիկյան Լ.**, *ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Երևան 1950, էջ 9:

Դեռևս 1292 թ. նկարազարդված ձեռագրերում նշմարվում են ծավալայնության ու հեռանկարի աղոտ աղերսները: Սա նշանակում է, որ նկարիչն արդեն ուշադրություն էր դարձնում հեռանկարին, բայց դեռ լիովին չէր տիրապետում այն պատկերելու տեխնիկային: Մոմիկի արվեստն իր ինքնատիպ լուծումներով դիտողին տանում է հոգևոր զորեղ ազդակներով հագեցած հմայիչ մի նոր աշխարհ, որ հիշեցնում է արվեստագետի կողմից ստեղծված բանական կառույցի մասին՝ կենտրոնում ունենալով արարչագործ Մարդուն:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Մոմիկի ստեղծագործական ժառանգությունն ամբողջության մեջ ներկայացնում է հայ արվեստի՝ ավանդական սկզբունքների և նորարարական միտումների զուգորդմամբ ու զարգացմամբ միահյուսված գեղարվեստական մի նոր որակ: Մոմիկը նման էր Վերածննդի արվեստագետներին ոչ միայն որպես ճարտարապետ և կերպարվեստի՝ տարբեր ասպարեզներում ստեղծագործող հմուտ ու բազմաշնորհ վարպետ, այլև որպես գեղագետ, քննող ու պրպտող, մտքի և հուզական խառնվածքի տեր ստեղծագործող անհատ, ինչպիսին նրան փորձել է ներկայացնել մեր ժամանակների քանդակագործը (նկ.8):

Summary

The Image of the Medieval Master Momik According to the Colophones

LUSINE GHAZARYAN
Teacher of "Fine arts"
of the basic school No. 2
after Kh. Abovyan, Yerevan

One of the most famous figures of Armenian art is the multi-talented medieval artist – architect, sculptor, scribe and miniaturist – Momik.

The churches, magnificent sculptures and khachkars created by him, as well as the miniatures of illuminated manuscripts are considered exceptional works of Armenian medieval art. Generally, Momik's creative heritage is a new artistic quality created by the combination of traditional principles of Armenian art and innovative approaches.

Not only a number of Momik's works, but also several colophones written by him and lithographic inscriptions survived to this day. Combining them with the testimonies of other authors and sources about Momik, the creative path and the rich heritage of the great artist are presented.

Key words: *Momik, Architect, Architecture, Miniature painting, Miniature, Stepanos Orbelyan, Noravank, Orbelian Prince.*

РЕЗЮМЕ

Образ средневекового мастера Момика согласно колофонам

ЛУСИНЕ КАЗАРЯН
Учитель «Изобразительного искусства»
основной школы № 2 им. Х. Абовяна г. Еревана

Одним из самых известных деятелей армянского искусства является талантливый средневековый художник - архитектор, скульптор, писец и художник-миниатюрист Момик.

Церкви, великолепные скульптуры и хачкары, созданные им, а также миниатюры переписанных рукописей считаются исключительными произведениями армянского средневекового искусства. В целом, творческое наследие Момика представляет собой новое художественное качество, созданное сочетанием традиционных принципов армянского искусства и новаторских подходов. До наших дней дошли не только ряд произведений Момика, но и некоторые написанные им колофоны и литографические надписи. Сопоставив их со свидетельствами других авторов и источников о Момике, мы представили в статье творческий путь и богатое наследие великого художника.

Ключевые слова: *Момик, Архитектор, Архитектура, Миниатюра, Миниатюрист, Степанос Орбелян, Нораванк, князь Орбелян.*

1. Նորավանքի ընդհանուր տեսքը վերականգնումից հետո



2. Մոմիկ. հատված «Խաչելություն» մանրանկարից,
Ռազմական Ավետարան, 1302, ՄՄ



3

3. Մոմիկ. Թամթա խաթունի պատվիրած խաչքարը՝ Աթաբեկ Տարսայիճի և իր որդիներ Բուրթելի և Բուղտայի հիշատակին. 1308 թ.
4. Խաչքար Մոմիկի հիշատակին (1333). Նորավանք

4

5

6

5. Վերին Ուլգյուրի եկեղեցին՝ Մոմիկի ընտանիքի անդամներին նվիրված խաչքարերով

6. Բուրթել իշխանի կառուցած երկհարկ դամբարան-եկեղեցին՝ Սուրբ Աստվածածինը. Նորավանք՝ 1339 թվական (788+551), որը եկեղեցու օծման տարեթիվն է

7. Մոմիկ. Մարկոս ավետարանիչ և Պետրոս առաքյալ, Ավետարան, 1292 թ., Մատենադարան, ձեռագիր 2848

8. Մոմիկին նվիրված քանդակը՝ Վայոց Ձորի բնակիչների կողմից: Եղեգնաձոր, թվականը եւ հեղինակը հայտնի չե՞ն:
Լուսանկարը՝ Մարինա և Համլետ Միրզոյանների: